



ANAHIT, REVUE ARMÉNIENNE TRIMESTRIELLE

Փ. ՏԱՐԻ ԹԻԻ 1 - 2

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ՅՈՒՆ. - ՄԱՐՏ 1939

ԱՏԵՓԱՆՆՈՍ ԴԱՏԵՑԻԻ ՄԷԿ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՔԸ

Երկար ոտանաւորը զոր կը հրատարակեմ, զորոն է Ստեփաննոս Դաւտեցի անուն բանաստեղծի մը որ ցարգ անձանօթ էր մնացած: Չայն գտայ հանդուցեալ Յովհաննէս Մկրեան Պոյսեցի նշանաւոր աւագ քահանային օրինակութեանց մէջ, որ կը գտնուին Բարեկործականի Փարիզի Պօղոս Նուպար մատենադարանին մէջ եւ զոր Արամ Անտոնեան իմ տրամագրութեանս տակ դրաւ քանի մը տարի առաջ: Թէ ո՞ր պարու մարդ է այս Դաւտեցին, չեմ գիտեր, քայց լեղուէն ու ոճէն այնպէս կ'երևայ որ շատ հին չէ, թերեւ ժէ. զարու վերջեր կամ ժէ. ի սկիւրներ եւ հաւանորէն Պարսկաստան ապրած: Այս ոտանաւորը միակ պազափար մը կամ պատմութիւն մը ընդլայնող

քերթուած մը չէ, այլ շարք մը քառականերու, մասամբ խրատական, մասամբ սիրային, եւ որոնց ամէն մէկը ուրոյն ամբողջութիւն մը կը կազմէ: Այս աշուղը հեռու է կոստանդին Երզրնկացիի մը կամ Յովհաննէս Թլուրեանցիի մը խոր ներշնչումն եւ ինքնարուխ ու նուրբ ոճն ունենալէ. կը սիրէ ճոխ յանդն ու արուեստակութիւնը, բառախաղը, եւ ատոնց կը դո՛չէ յաճախ իմաստի յստակութիւնն ու մտածումներու տրամաբանական յաջորդութիւնը. քայց եւ ունի յաջող մասեր, ուր կեանքի սուր զիտողութիւններ, քարոյական ուժեղ խորհուրդներ, սիրոյ ջերմ զեղումներ կը զըտանենք արտայայտուած սեղմ ու կուռ տողերու մէջ, հիւսուած ճարտար տաղաչափութեամբ

մը, որ մեր Արխիպանին մէկ նախորդը կը կա-
ցուցանէ այս Ստեփաննոսը:

Որովհետեւ բաւական դժուարահասկնալի է
քնազիրք, անոր կ'ընկերացնենք մեր այժմեան
աշխարհաբարի վերածումը:

Ա. ԶՕՊԱՆԵՍՆ

Յ. Գ. — Սյս ծանօթագրութեան շարադ-
րումը, Դաշտեցիի ստանաւորին իմ ընդօրինա
կութեանս ու աշխարհաբարի վերածմանը նետ,
ես կատարած էի քանի մը տարի առաջ, բայց
տեղի պակասը ցարդ թոյլ չէր տուած որ հրա-
տարակէի գանձը: Անկէդ ի վեր, ստացայ Գ.
Սիմոն Սիմոնեանէն, իմ Հալէպի երիտասարդ
եւ արժէքաւոր աշխատակիցէս, (որուն ա՛յնքան
շահեկան ուսումնասիրութիւնը, ճշկատողու-
թիւններ Վարդան Այդեկցիի նորայայտ ձեռա-
գիրներուն վրայ), հրատարակեցի Անահիտի
1937 տարեշրջանի 3 - 4 միացեալ թիւին մէջ),
ընդարձակ յօդուած մը Ստեփաննոս Դաշտեցիի
վրայ: Սիմոնեան որ համբերատար եւ մեթո-
տիկ պրոյտող մըն է եւ կը խոստանայ մեր վաղ-
ուան բաղձարդին քանասէրներէն մին դա-
նալ, յաջողած է գտնել շարք մը ստանաւորներ
Ստեփաննոս Դաշտեցիէն ու նաեւ բաւական
մանրամասն տեղեկութիւններ անոր կենսադր-
ութեան վրայ: Ես այս թիւով կը հրատարա-
կեմ իմ աշխատութիւնս, յառաջիկայ թիւին
վերապահելով Սիմոնեանի յօդուածին եւ Ստե-

փաննոս Դաշտեցիի միւս ստանաւորնէկուն հը-
րատարակութիւնը:

Սիմոնեանի գտած ստանաւորներու շար-
քին մէջ կը գտնուի նաեւ այս թիւով իմ հրա-
տարակածս: Բաղդատեցի երկու օրինակները եւ
նկատեցի որ տարբերութիւնները սակաւաթի-
ւն: Կը գնեմ հոս այդ տարբերութիւնները,
որոնց համեմատութեամբ ուղղեցի քնազիրք.
4րդ տուն, Ա. (Մկրեանի օրինակ) ճաւեր, Բ.
(Սիմոնեանի օրինակ) ճաւեր: 5րդ տուն, Ա.
շառէն, Բ. շառէն: 6րդ տուն, Ա. կ'եյնես, Բ.
կ'եյնիս: 7րդ տուն, Ա. խօսք, Բ. խօսք:
արիւն: 12րդ տուն, Ա. խօսք, Բ. խօսք:
18րդ տուն, Ա. շարութիւն, Բ. շարութիւն:
21րդ տուն, Ա. գիմուն, Բ. գիմուն: 24րդ
տուն, Ա. աղքետ, Բ. յաղքետ: 28րդ տուն,
Ա. աշխարհումս, Բ. աշխարումս: 30րդ տուն,
Ա. գոհար, Բ. գոհար. Ա. երբեմն ինձ, Բ.
երբեմն ինձի: 31րդ տուն, Ա. չի տեսնու, Բ.
չրտեսնու: 34րդ տուն, Ա. Ստեփան էլ, Բ.
Ստեփան, ե՛լ: 36րդ տուն, Ա. երբ կուտ չունիմ.
ի՞նչ գայ աղայ, Բ. երբ կուտ չունիմ, ի՞նչ գա
աղայ (գայ՛ղայ): 44րդ տուն, Ա. հոգոյս, Բ.
հոգոյս: 45րդ տուն, Ա. հօ. Բ. խօ: 47րդ տուն,
Ա. չոք, Բ. չոք: 52րդ տուն, Ա. լուին, Բ.
լուին. Ա. հարկի, Բ. հարկիք: 53րդ տունը կը
գտնուի միայն Սիմոնեանի օրինակին մէջ: 57րդ
տուն, Ա. լեղակ ունի, Բ. լեղակ ունիմ: 58րդ
տուն, Ա. աաշիմ, Բ. մաշիմ: 59րդ տուն, Ա.
եւ ոչինչ, Բ. սա ոչինչ:



7828-62

